ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց 1901/B02. Հայաստանի պետության և իրավունքի պատմություն.

Որակավորման
աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ դոց. Գ. Հովսեփյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ – 2013

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1901/B02. Հայաստանի պետության և իրավունքի պատմություն. (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 դասախոսություն, 24 սեմինար, 86 ինքնուրույն աշխատանք)

1-ին կիսամյակ: Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց:

**Նպատակը և խնդիրները.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել Հայաստանում պետության և իրավունքի ծագման, զարգացման հատուկ և կոնկրետ օրինաչափությունները, նպաստել մասնագետի ընդհանուր պատրաստվածությանը, նրա մոտ պատամաիրավան մոտեցման մշակմանը՝ որպես արդի հայոց պետության և իրավունքի գիտական ճանաչման նախադրյալ:

**Դասընթացի խնդիրներից են՝**

Ուսանողները ձեռք են բերում պետաիրավական երևույթներին պատմական մոտեցում դրսևորելու հմտություն, ինչպես նաև սովորում են պետությունը և իրավունքը ճանաչելու գիտական մեթոդաբանությունը: Խնդիրներից է նաև սովորողին պատրաստել յուրացնելու ճյուղային իրավագիտական դասընթացները, որոնք ի վերջո պատմական գործընթացի զարգացման արդյունք են:

**Կրթական վերջնաարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կսովորի Հայաստանի պետաիրավական պատմությունը, ձեռք կբերի արդի հայոց պետության և իրավական համակարգի ավելի խորը և բազմակողմանի ճանաչման ու իմաստավորման հմտություն,
2. ձեռք կբերի արդի պետականության և իրավունքի զարգացման ու կատարելագործման ճանապարհները որոշելու գիտելիքներ,
3. ձեռք կբերի իրավական իմաստնություն և խորաթափանցություն, պատմաիրավական, ստեղծագործական, քննադատական մոտեցում, հարուստ իրավական մշակույթ:

*Քննությունների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Ստուգման ձևերն են. 1-ին ընթացիկ քննություն. գրավոր առաջադրանք՝ 4 հարցով, յուրաքանչյուր հարցի առավելագույն միավորը՝ 1, միավորների քայլը 0,5 է: Հարցի բովանդակության կեսից պակասը գրառելը գնահատվում է 0 միավոր, լիարժեքը՝ 2,5 միավոր: 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր առաջադրանք, 4 հարցով, յուրաքանչյուր հարցի առավելագույն միավորը՝ 1, միավորների քայլը 0,5 է: Հարցի բովանդակության կեսից պակասը գրառելը գնահատվում է 0 միավոր, լիարժեքը՝ 2,5 միավոր:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը առավելագույնը 2.5 միավոր, միավորների քայլը՝ 0.5:

Առաջին ընթացիկ գրավորը ներառում է դասընթացի 1-5 թեմաները, իսկ երկրորդը՝ 6-11:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ և ՄԵԹՈԴԸ

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հայաստանի պետության և իրավունքի պատմության դասընթացի առարկան և մեթոդը:
2. Հայաստանի պետության և իրավունքի պատմության դասընթացի խնդիրները, նրա տեղը իրավաբանական գիտությունների, մասնավորապես՝ պատմա-իրավագիտական դասընթացների համակարգում:
3. Հայաստանի պետության և իրավունքի պատմության պարբերացումը:
4. Հայաստանի պետության և իրավունքի պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 4 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

### ԹԵՄԱ 1. ՀՆԱԳՈՒՅՆ ՑԵՂԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հնդեվրոպական նախալեզվի սկզբնական հայրենիքի վերաբերյալ նորագույն տեսությունը:
2. Հայոց լեզվի և հայկական ցեղերի առաջացման ժամանակը և տարածքը:
3. Հայկական ցեղերը Հայկական բարձրավանդակում մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում:
4. Հայ ժողովրդի կազմավորումը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 4- - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

### ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Տոհմատիրական կարգերի քայքայումը Հայկական բարձրավանդակում մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներում:
2. Հայկական հնագույն քաղաքական կազմավորումները՝ Նաիրի, Հայասա-Ազի և այլն:
3. Հայաստանի պետության և իրավունքի առաջացումը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 1-3- Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

### ԹԵՄԱ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Արարատյան թագավորությունը (մ.թ.ա. 9-6-րդ դ.դ.): Արարատյան թագավորության հասարակական կարգը, պետական կարգը, իրավունքը:
2. Հայաստանը Երվանդյան արքայատոհմի դարաշրջանում (մ.թ.ա. 6-2-րդ դ.դ.): Հասարակական կարգը, պետական կարգը, իրավունքը:

3. Հայկական միացյալ կենտրոնացված պետության ստեղծումը (Արտաշեսյան արքայատոհմի դարաշրջան, մ.թ.ա. 2-1-ին դ.դ.):
4. Հայկական աշխարհակալ պետության առաջացումը (Տիգրան Մեծ, 95-55 թ.թ.):
5. Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում:
6. Հայաստանի հասարակական կարգը, պետական կարգը և իրավունքը 2-3-րդ դ.դ.:

*Հարցեր 1-4, 6 - անցկացվում են դասախոսություններ:*
*Հարց 5 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԹԵՄԱ 4. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (3-9-ՐԴ Դ.Դ.)

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Ֆեոդալական արտադրաեղանակի առաջացումը և հաստատումը: Ֆեոդալիզմի զարգացման փուլերը:
2. Քրիստոնեության ընդունումը և նրա դերը հայ ժողովրդի հոգևոր-մշակութային առաջընթացում: Պետությունն ու իրավունքը Հայաստանում վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում (3-9-րդ դ.դ.):
3. Արշակունյաց արքայատոհմի անկումը: Մարզպանության ժամանակաշրջան: Արաբական տիրապետության ժամանակաշրջան:
4. Հայկական թագավորության վերականգնումը Բագրատունիների գլխավորությամբ:
5. Հայաստանի հասարակական կարգը, պետական կարգը և իրավունքը վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում:

*Հարցեր 1-3, 5 - անցկացվում են դասախոսություններ:*
*Հարցեր 4 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԹԵՄԱ 5. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (10-13-ՐԴ Դ.Դ.)

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Զարգացած ֆեոդալիզմի առանձնահատկությունները վաղ ֆոեդալիզմի համեմատությամբ: Քաղաքների զարգացումը: Արհեստագործության, առևտրի և վաշխառության բուռն աշխուժացումը:
2. Գյուղական համայնքի քայքայման հետագա խորացումը, գյուղացիների ճորտացման սկզբնավորումը: Մեծատուների դասի առաջացումը և նրանց պատմական ճակատագիրը:
3. Բագրատունիները որպես Անդրկովկասը գլխավորող ու միավորող ուժ: Միասնական թագավորության տրոհումը մանր թագավորությունների: Արծրունյաց և Բագրատունյաց թագավորությունների վերացումը Բյուզանդական կայսրության կողմից:
4. Հայկական թագավորությունների հասարակական կարգը, պետական կարգը, իրավունքը:
5. Իրավունքի հուշարձանները:
6. Սելջուկյան նվաճումները: Հայկական թագավորություններն ու իշխանությունները սելջուկյան տիրապետության ժամանակ: Ազգային ազատագրական պայքարը:
7. Հայկական պետականության վերականգնումը Զաքարյանների գլխավորությամբ: Հայվրացական հարաբերությունները:
8. Հայաստանի հասարակական կարգը, պետական կարգը, իրավունքը Զաքարյանների տիրապետության դարաշրջանում:

9. Հայ իրավունքի հուշարձանները. Կանոնագրքի նոր խմբագրությունը, Ալավկա որդի Դավթի կանոնադրությունը, Մխիթար Գոշի դատաստանագիրքը:

*Հարցեր 1, 4-5, 8-9 - անցկացվում են դասախոսություններ:*
*Հարցեր 2-3, 6-7 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԹԵՄԱ 6. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ (1080-1425 թ.թ.)

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հայկական իշխանությունները Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության հաստատումը: Ռուբինյան իշխանությունը և Բյուզանդիան: Ռուբինյան իշխանության ամրապնդումն ու ընդարձակումը: Կիլիկյան հայկական թագավորության հռչակումը: Հեթումյան արքայատոհմի հաստատումը:
2. Կիլիկյան հայկական թագավորությունն ու մոնղոլական աշխարհակալությունը: Կիլիկյան հայկական թագավորությունն ու շրջակա մահմեդական պետությունները: Կիլիկյան թագավորության անկումը:
3. Կիլիկյան հայկական թագավորության հասարակական կարգը, պետական կարգը:
4. Կիլիկյան հայկական թագավորության իրավունքը, իրավունքի հուշարձանները:
5. Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը:
6. Իրավունքի թարգմանական հուշարձանները՝ բյուզանդական, ֆրանկյան:

*Հարցեր 2-6 - անցկացվում են դասախոսություններ:*
*Հարցեր 1 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԹԵՄԱ 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (14-19-ՐԴ Դ.Դ.)

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Մոնղոլական արշավանքներն ու նրանց տիրապետության հաստատումը Անդրկովկասում: Զաքարյանների անուժանալն ու Օրբելյանների վերելքը: Իշխանության անկումը: Լենկթեմուրի արշավանքները: Թուրքական ցեղերի ասպատակությունները, ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի, Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի կռիվները Հայաստանում, Հայաստանի բաժանումը նրանց միջև 1555-1639 թ.թ.:
2. Հայկական ֆեոդալիզմն ու քոչվորական ֆեոդալիզմը: Հայաստանի տնտեսության անկումը քոչվորական ֆեոդալիզմի և հարկային դաժան քաղաքականության պայմաններում: Հայության զանգվածային արտագաղթը երկրից:
3. Հայաստանի վարչական կարգը և կառավարման մարմինները Թուրքիայի և Իրանի տիրապետության տակ (մինչև 1828 թ.): Իրավունքը:
4. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայի և Պարսկաստանի դեմ Սյունիքում և Ղարաբաղում:
5. Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորումն ու հաղթանակը: Հայաստանի ազատագրության ու պետականության վերականգնման քաղաքական ծրագրերը: Ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները և Հայաստանը: Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին:

*Հարցեր 3, 5 - անցկացվում են դասախոսություններ:*
*Հարցեր 1-2, 4 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԹԵՄԱ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 1828-1917 թ.թ.

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Արևմտյան Հայաստանի վարչական կարգը և կառավարման մարմինները: Հայաստանի ծանր տնտեսական դրությունը և դրա վատացումը: Ազատագրական բաղձանքները և հայկական կուսակցությունների առաջացումը: Ազգային ազատագրական շարժումները:
2. Հայկական հարցի առաջացումը և դրա շահարկումը իմպերիալիստական պետությունների կողմից: Հայկական հարցի լուծումը Թուրքիայի կառավարող շրջանների կողմից՝ պատմության մեջ առաջին ցեղասպանությունը:
3. Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման առաջադիմական նշանակությունը: Հայաստանի զարգացումը Ռուսաստանի կազմում: Իշխանության և կառավարման մարմինները:
4. Իրավունքը և Հայաստանին վերաբերող օրենքները, 1836 թ. կանոնադրությունը:
5. Հեղափոխական շարժումները Ռուսաստանում և Հայաստանում:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 4-5 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

# ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՄԱՆ, ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

## ԹԵՄԱ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 թ.թ.)

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Առաջին համաշխարհային պատերազմը, Անդրկովկասյան ռազմաճակատը: Հոկտեմբերյան հեղաշրջումը և հայկական, վրացական և ադրբեջանական ազգային կուսակցությունների դիրքորոշումը:
2. Անդրկովկասյան Կոմիսարիատի (1917 թ. նոյեմբեր) և Անդրկովկասյան սեյմի (1918 թ. փետրվար) ստեղծումը:
3. Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից Անդրկովկասյան սեյմի կողմից 1918 թ. մարտին, և երկրամասի հռչակումը անկախ ֆեդերատիվ հանրապետություն 1918 թ. ապրիլի 22-ին: Անդրկովկասյան կառավարության ստեղծումը (ապրիլին):
4. Անդրկովկասյան սեյմի լուծարումը՝ (1918 թ. մայիսի 26-ին) ազգային կուսակցությունների ներքին սուր հակասությունների հետևանքով և գերմանաթուրքական օկուպանտների ճնշման տակ: Անկախ Վրաստանի և Ադրբեջանի հռչակումը սեյմի լուծարքի հետևանքով:
5. Սարդարապատի հերոսամարտը և նրա դերը հայ ժողովրդի գոյատևման, ինչպես նաև առաջին հանրապետության կայացման գործում: Բաթումի պայմանագիրը:
6. Հայկական առաջին հանրապետության հասարակական-քաղաքական կարգը: Առաջին և երկրորդ խորհրդարանների բնորոշ գծերը: Նրանց դերը իրավաստեղծ գործունեության և պետական շինարարության բնագավառում:
7. Կառավարման կենտրոնական և տեղական մարմինները:
8. Հայաստանի առաջին հանրապետությունը գերտերությունների դիվանագիտական ռռզայթներում և Թուրքիայի ուղղակի ռազմարշավի պայմաններում: Սևրի պայմանագիրը:
9. Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ միջև 1920 թ. հոկտեմբերի 28-ին կնքված նախնական պայմանագիրը: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրոպոլի պարտադրված պայմանագիրը:

*Հարցեր 1-7 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 8-9 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

### ԹԵՄԱ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ (1920- 1988 թթ.)

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքները հայ ժողովրդի ճակատագրում: Սոցիալիստա-կան հեղաշրջումը Հայաստանում: Առաջին հանրապետության կործանումը և երկրորդ հանրապետության ստեղծումը: Սոցիալիստական հասարակական-քաղաքական և իրավական համակարգի ստեղծումը:
2. Հայհեղկոմի առաջին դեկրետները: Անցումը հեղկոմներից խորհուրդներին (1921 թ. հուլի-սից-1922 թ. հունվար):
3. Խորհուրդների համահայկական անդրանիկ համագումարը և ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը: Իշխանության և կառավարման մարմինները:
4. Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: Հայաստանի՝ որպես գերիշխան խորհրդային սոցիալիստական հանրապետության գոյության դադարումը: Նրա վերածումը ԱԽՖՍՀ և ԽՍՀՄ բաղադրատարրի:
5. ԽՍՀՄ 1924 թ. սահմանադրությունը և նրանում սահմանված սկզբունքների արտացոլումը ՀԽՍՀ 1926 թ. սահմանադրությունում:
6. Հայաստանի հասարակական-տնտեսական և գիտամշակութային առաջընթացը ԽՍՀՄ կազմում:
7. Խորհրդային հասարակական-քաղաքական համակարգի կատարելագործման փորձերը: ԽՍՀՄ 1936, 1977 և ՀԽՍՀ 1937 և 1978 թթ. սահմանադրությունները:

*Հարցեր 1-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 6-7 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ. ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

### ԹԵՄԱ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

(3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. 1985 թ. հռչակված վերակառուցման և նոր մտածողության քաղաքականության բարերար նշանակությունը հոգևոր և մտավոր ազատության արմատավորման և առաջընթացի գործում:
2. ԽՍՀՄ Քաղաքական համակարգը պահպանելու պայմաններում հասարակական-տնտեսական համակարգը ազատականացնելու անհաջող փորձերը: ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ժողովուրդների քաղաքական և ազգային աշխուժացումը:
3. Արցախյան շարժումը որպես հայ ժողովրդի ազգային և քաղաքական զարթոնքի ահազանգ: Սումգաիթյան ցեղասպանությունը: Բաքվի, Կիրովաբադի ողբերգությունները:

4. ԼՂՀ-ի մարզային խորհրդի և Հայաստանի Գերագույն խորհրդի ակտերը ԼՂՀ խորհրդային Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ: ԽՍՀՄ լուծարումը և Անկախ պետությունների առաջացումը:
5. Հայաստանի անկախության հռչակագիրը և հանրաքվեն: Հայաստանի Հանրապետության միջազգային-իրավական վիճակը: Ժողովրդավարական կարգերի արմատավորումը Հայաստանում: Բազմակուսակցությունը և օրենքի գերակայությունը որպես բռնապետության բացառման կարևորագույն գործոններ:
6. 1995 թ. հուլիսի 5-ի համաժողովրդական հանրաքվեն և ՀՀ Սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումը:
7. Հայաստանի Հանրապետության՝ որպես պետության բնութագրերը՝ ինքնիշխանությունը, ժողովրդավարությունը, սոցիալականությունը, իրավականությունը: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումը:
8. Իշխանությունների տարանջատման սկզբունքի կենսագործումը հիմնական օրենքում: ՀՀ կառավարման ձևը:
9. 2005 թ. համաժողովրդական հանրաքվեն և ՀՀ Հիմնական օրենքի բարեփոխումը: Իշխանությունների միջև փոխզսպումների և հակակշիռների կառուցակարգի հստակեցումը որպես դրանց հավասարակշռված գործունեության ապահովման երաշխիք:
10. Իրավունքի առաջնայնությունը և օրենքի գերակայությունը որպես հասարակության տնտեսական և քաղաքական համակարգերի կազմակերպման և գործունեության սկզբունք: Հանրապետական կառավարման խառը ձևի ամրագրումը:
11. ՀՀ պետականության և իրավական համակարգի զարգացման հեռանկարները:

*Հարցեր 4-11 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարցեր 1-3 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ԲՈԼՈՐ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ


1. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1. Երևան, 1939:
2. Հայ ժողովրդի պատմություն. հատ 1-3, 7, Երևան, 1963-1983 թթ.:
3. Ա.Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962:
4. А.Г. Сукиасян Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963.
5. А.Г. Сукиасян История Киликийского армянского государства и права, Ереван, 1969.
6. Х.А. Торосян Суд и процесс в Армении 10-13 вв., Ереван, 1985:
7. История государства и права Армении, Т. 1, Ереван 1974.
8. История государства и права Армении, Т. 2, Ереван, 1978.


### ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ


1. Կանոնագիրք Հայոց , աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ա, Երևան,1964:
2. Կանոնագիրք Հայոց , աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Բ, Երևան,1971:
3. Դավիթ Ալավկա որդու կանոնները, աշխատասիրությամբ պրոֆ. Ա. Աբրահամյանի, ՙԷջմիածին՚ ամսագիր, 1953:
4. Ավագյան Ռ.Ա. Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. 9-մ.թ.14 դդ.), Երևան, 2001:

5. Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց, աշխատասիրությամբª Վահան Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880:
6. Ներսէս Լամբրոնացի, Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր իննակալութեամբ Լևոն, ի գիրս Ընտիր մատենագիրք, Գրիգոր կաթողիկոս Տղա, Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ, 1865:
7. Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), Էջմիածին, 1918:
8. Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխատասիրությամբ՝ Ֆ. Պողոսյանի, Երևան, 1967:
9. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975:
10. Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը, 1905 թ (Ի.Կարստի),
11. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, համահավաք տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գալստյանի, Երևան, 1953:
12. Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:
13. Ներսիսի Լամբրոնացվոյ Զինվորական օենք, Բանասեր ամսագիր, 1902, նո.11:
14. Ներսիս Լամբրոնացի, Քաղաքային օրենք, Փարիզ, 1907 թ.:
15. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871 թ.:
16. Մովսես Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչի յորդորակ, Մադրաս, 1722 թ.կամ Երևամ 1994:
17. Հակոբ Շահամիրյան, Որոգայթ-փառաց, Մադրաս 1773 թ. կամ Թիֆլիս, 1913:
18. Սիմոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873:
19. Ազգային սահմանադրություն հայոց, Կ.Պոլիս, 1860 կամ 1870 թ. հրատարակություն:
20. Հայհեղկոմի 1920 թ. նոյմբերի 29-ի դեկլարացիանª Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու մասին:
21. ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ.1, Էջմիածին, 1921 թ:
22. Խորհրդային Հայաստանի 1922 թ. փետրվարի 3-ին ընդունված Սահմանադրությունը:
23. ԽՍՀՄ 1924 և 1936, 1977 թթ. Սահմանադրությունները:
24. ՀԽՍՀ 1937 թ. և 1978 թ. Սահմանադրությունները:
25. ՀԽՍՀ 1922 և 1927 թթ. քրեական օրենսգրքերը, 1922 թ. քաղաքացիական, հողային, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, 1927 թ. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգիրքը:
26. ՀԽՍՀ քրեական, քաաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերըª ընդունված 1961 թ. և 1964 թ. և հրատարակված Հայկական ԽՍՀ օրենքներ ու կարգադրություններ խորագրով ժողովածուներում:
27. Հեղկոմները Հայաստանում, Երևան, 1974, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր-1922 թ. հունվար): Կազմեց Ս.Մ. Սահրադյանը:
28. ՀՀ Սահմանադրություն, Երևան, ՙՄխիթար Գոշ՚, 1997:
29. Судебник Смбата Спарапета (Гундстабля), перевод со среднеармянского, предисловие и примечание проф. А.Сукиасяна,Ереван,1971.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1. Гамкрелидзе Т.В., Иванов В.В. Индоевропеский язык и индоевропейцы, Ч. 2, Тбилиси, 1984.
2. Ս.Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան, 1986:
3. Ռ.Ա. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988:
4. Խ.Ա. Թորոսյան, Դատարանային համակարգը Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ՙՏեղեկագիր՚, ՀՍՍՀ ԳԱ, 1965, նո. 12:
5. Ա.Գ. Սուքիասյան, Մխիթար Գոշը և հայոց դատաստանագիրքը, Երևան, 1963:
6. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975: Առաջաբանը:

7. Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում 4-18 դարերում, Երևան, 1956:
8. Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966:
9. Հ.Ղ. Ալիշան, Սմբատ Գունդստաբլ, Հայոց և Անսիզք Անտիոքայ, ՙԲազմավէպ՚, Վենետիկ, 1876:
10. Սիսուան, խմբագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի հ. Ղեւոնդեայ վ. Մ.Ալիշան, Վենետիկ, 1885:
11. Հ. Քիւրտեան, Նորագիւտ օրինակ մը Անսիզ Անտիոքայ օրինագրքին, Բազմավէպ: Վենետիկ, 1956, 1-2:
12. Գ. Հարությունյան, Կնոջ և մոր իրավական դրությունը հին և միջնադարյան Հայաստանում, մանկաբարձական գիտելիքների զարգացման կապակցությամբ, ՙԱշխատություններ՚ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի, թիվ 2, Երևան, 1940:
13. Վ. Բաստամեանց, Յառաջաբանութիւն գրոյն Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
14. Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն, Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը, Վիեննա, 1890:
15. Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում 12-14 դդ., Երևան, 1973;
16. Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1961:
17. Գ. Գրիգորյան, Միջնադարյան Հայաստանում դիահերձման գոյությունը հաստատող մի նոր փաստ, ՙԲանբեր մատենադարանի՚, թիվ 6, Երևան, 1962:
18. Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն, 2, Գոլէր, իրաւունք հայոց, Վիեննա, 1890:
19. Կ. Կոստանյան, Դաւիթ Ալաւկա որդի, ՙԱզգագրական հանդէս՚, h.գ. 15, Թիֆլիս, 1907:
20. Ե. Մակարյան, Դատական բժշկության հարցերը Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքում, ՊԲՀ, 1963, թիվ 4;
21. Ե. Մակարյան, Նյութեր Հայաստանի դատական բժշկության պատմությունից. ՙՏեղեկագիր՚, 1956, թիվ 10:
22. Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը 7-9 դարերում, Երևան, 1968:
23. Լ. Մելիքսեթ-բեկ, Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաքարյան Հայաստանում, ՙՏեղեկագիր՚, 1945, թիվ 3-4:
24. Ն.Վ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903, գիրք Բ, Շուշի, 1905:
25. Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. վարդապետի Բաստամեանց, ի Վաղարշապատ, 1880:
26. Խ. Սամուէլեան, Միխիթար Գոշի դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա,1911:
27. Խ. Սամուէլեան, Հին հայ իրավունքի պատմութիւն, h., Երևան, 1930:
28. Խ.Սամուէլեան, Արեան վրէժ եւ փրկանք, ՙԱզգագրական հանդէս՚, 10 գիրք, Թիֆլիս, 1903:
29. Ա. Սուքիասյան, Մխիթար Գոշը և ՙՀայոց դատաստանագիրքը՚, Երևան, 1965:
30. Ս. Տիգրանյան, Հայ իրավունքի պատմության ներածություն, Երևան, 1924:
31. Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, դ. 1, Երևան, 1962, h. 2, Երևան 1977:
32. Խ. Թորոսյան, Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ՙԲանբեր Մատենադարանի՚, թիվ 6, 1962:
33. Խ. Թորոսյան, Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրությունները, ՙՊատմա-բանասիրական հանդես՚, թիվ 1, 1963:
34. А.З. Бегян Образование и управление суверенного советского армянского государства, Ереван, 1962.
35. А.А. Есаян Советская Армения-субьект международного права, Научные труды Ергосунта, 1982.
36. А.А. Есаян Международная договорная практика Советской Армении, Научные труды Ергосунта, 1962.
37. Ш.Н. Петросян История конституционного развития советской государственности в Армении, 1968.

38. Վաղարշյան Ա.Գ., Երդվյալ ատենակալների դատարանը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.) ՀՀ ԳԱԱ Գիտություն, Երևան, 1996, 1 տ. մամուլ:
39. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենսդրական կենսագործումը, Իրավունք և օրինականություն, թիվ 2(10), Երևան, 1996, 26-31 էջերը:
40. Վաղարշյան Ա.Գ., Դատական իշխանությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Հանդես Երևանի Համալսարանի, թիվ 1(84), Երևան, 1996, 47-20 էջերը:
41. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին Հանրապետության պետական կառավարման ձևը և օրինաստեղծ գործառնություն ունեցող մարմինները, Գիտ. Հոդվ. ժողով., Գեղարքունիքի մարզի Գավառի պետական համալսարան, 1996 թ., 79-84 էջերը:
42. Վաղարշյան Ա.Գ., Չկայացած Սահմանադրություն, Գիտ. Հոդվ. ժողով., Գեղարքունիքի մարզի Գավառի պետական համալսարան, 1996 թ., 75-79 էջերը:
43. Վաղարշյան Ա.Գ., Մահապատիժը որպես քրեական պատժատեսակ Հայաստանի առաջին Հանրապետությունում, Իրավարիտության հարցեր, թիվ 1, Երևան, 1997, 13-19 էջերը: Իրավարիտության հարցեր, թիվ 1, Երևան, 1998, 13-19 էջերը:
44. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2003, 160 էջ:
45. Վաղարշյան Ա.Գ., Խորհրդարանական ընտրությունները Հայաստանի Առաջին Հանրապետությունում, Իրավարիտության հարցեր, 2002, թիվ 4, էջ 23-27:
46. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2003, 160 էջ:
47. Վաղարշյան Ա.Գ., Ընտրական իրավունքի հիմունքների պատմական զարգացումը Հայաստանում, Վասն արդարության, թիվ 4 (40), Երևան, 2003, էջ 10-15:
48. Վաղարշյան Ա.Գ., Դատական համակարգը Հայաստանի Առաջին Հանրապետությունում, Օրենք և իրականություն, թիվ 7, Երևան, 2003, էջ 5-9:
49. Վաղարշյան Ա.Գ., Դատավորների անկախության սկզբունքի երաշխիքների վերացումը Առաջին հանրապետությունում, Իրավարիտության հարցեր, թիվ 3, Երևան, 2005, էջ 6-10:
50. Վաղարշյան Ա.Գ., Դատարանների ու դատավարության ազգայնացումը և դրա հետևանքները Հայաստանի առաջին Հանրապետությունում, Իրավարիտության հարցեր, թիվ 1-2, Երևան, 2006, էջ 96-100:
51. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը /1918-1920/, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 208 էջ:
52. Վաղարշյան Ա.Գ., Օրենսդիր իշխանության զարգացման փուլերը Առաջին հանրապետությունում և Հայաստանի խորհուրդը, Իրավարիտության հարցեր, թիվ 4, Երևան, 2006, էջ 6-16:
53. Վաղարշյան Ա.Գ., Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացի իրավական հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտաժողովի նյութերի ժողովածու: ԵՊՀ հրատ., Երևան, 2007, էջ 25-32:
54. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական ռործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում, Հայկական բանակ, Երևան, թիվ 2-3 (56-57), 2008, էջ 118-139:
55. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը ձևավորելու կարգը եվ պետական կառավարման ձևը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, թիվ 132.3, 2010, էջ 5-18:
56. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի երեք հանապետություններում սահմանադրական կարգավորման տիպերը և զինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների սահմանադրական իրավական ամրարումը, Հայկական բանակ, Երևան, թիվ 2(64), 2010, էջ 17-29:

57. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների իրավասությունը արդարադատության ոլորտում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, թիվ 133.3, 2011, էջ 3-15:

## ԲԱԺԻՆ 4. ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Երևանի համ. հրատ., 2001:
2. Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003:
3. Վաղարշյան Ա.Գ. Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003:
4. Խաչատրյան Հ. Հայաստանի առաջին սահմանադրությունը, Երևան, 1995 թ.:

## Հայաստանի պետության և իրավունքի պատմություն առարկայի քննական հարցաշարան բակալավրի կրթական ծրագիր

Հարցաշարանի 1-41 հարցերը նախատեսված են 1-ին ընթացիկ գրավոր քննության համար, 42-100 հարցերը՝ 2-րդ գրավոր քննության: Ամբողջ հարցաշարանը ներառվելու է եզրափակիչ բանավոր քննության տոմսերում:

### 1-ին ընթացիկ գրավոր քննություն

1. Հայաստանի պետության և իրավունքի պատմության դասընթացի առարկան
2. Հայաստանի պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման մեթոդները
3. Հայաստանի պետության և իրավունքի պատմության ժամանակագրությունը
4. Հայկական ցեղային միությունները. Արմանի, Հայասա, Նաիրի
5. Հայ ժողովրդի ծագման փոյուգիական և թեսալական վարկածները
6. Հայ ժողովրդի կազմավորումը և հայկական պետականության ստեղծումը
7. Հայ ժողովրդի ծագման հնդեվրոպական տեսությունը
8. Հայ ժողովրդի ծագման նոստրատիկ տեսությունը
9. Վանի Արարատյան թագավորության հասարակական կարգը
10. Հայաստանի հասարակական կարգը ստրկատիրության ժամանակաշրջանում
11. Քրմական դասը ստրկատիրական Հայաստանում
12. Ստրուկների իրավական դրությունը
13. Ստրկության աղբյուրները
14. Հայկական ստրկատիրական պետության բնույթը
15. Հայկական ստրկատիրական պետության աստվածապետական բնույթը
16. Իրավունքի աղբյուրի (ձևի) հասկացության նյութական և իրավական իմաստները
17. Հայկական ստրկատիրական իրավունքի բնորոշ գծերը: ՙԱնեծքի բանաձևերի՚ կարգավորիչ դերը
18. Սովորույթը որպես իրավունքի աղբյուր. հասկացությունը և էությունը
19. ՙԱնեծքի բանաձևումներ՚-ի քրեաիրավական նպատակաուղղվածությունը

20. Արտաշեսյան թագավորների բացարձակ ինքնակալության էությունը և տնտեսական հիմքը

21. Պետական կարգը Արտաշեսյան արքայատոհմի ժամանակաշրջանում (Արտաշես Ա, Տի•րան
22. Նախարարական կարգի էությունը

23. Ավատական կարգի էությունը

24. Հողասեփականության ձևերը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

25. Բդեշխների հասարակական-քաղաքական դրությունը

26. Սյուզերենա-վասալական հարաբերության տնտեսական հիմքը և իրավական երաշխիքը

27. Թագավորը որպես ֆեոդալական աստիճանակարգության գլուխ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

28. Պետական մեխանիզմի հարկադրական օղակները վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

29. Աշխարհաժողովների տեղը ֆեոդալական Հայաստանի քաղաքական համակարգում

30. Ֆեոդալական իրավունքի բնորոշ գծերը

31. Եկեղեցու իրավաստեղծ գործունեությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

32. Կանոնական իրավունքը իբրև հայ ֆեոդալական իրավունքի աղբյուր

33. Հայ իրավունքի ընկալված աղբյուրները վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Մովսիսական օրենքներ:

34. Հայոց թագավորների իրավաստեղծ գործունեությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

35. ՙԳահնամակ՚ և ՙԶորանամակ՚

36. Հայկական պետության վաղ ֆեոդալական բնույթը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

37. Հասարակական կարգում կատարված փոփոխությունները զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

38. Պետության առաջացման ուղիները ըստ Մ. Գոշի

39. Պետության ինքնիշխանության ըմբռնումը Մ.Գոշի դատաստանագրքում

40. Գահաժառանգման կարգը ըստ Մ. Գոշի դատաստանագրքի

41. Ամուսնության դրական պայմանները ըստ Մ. Գոշի դատաստանագրքի

## 2-րդ ընթացիկ գրավոր քննություն

42. Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական ստորակարգությունը. աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներ

43. Բարոնների հասարկական-տնտեսական դրությունը Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական համակարգում

44. Կիլիկյան Հայաստանի անազատների դասը. պառիկոններ, շինականներ և ստրուկներ

45. Ձիավորների և հեծելվորների հասարակական տնտեսական դրությունը Կիլիկյան Հայաստանում

46. Գործակալությունները որպես Կիլիկիայի հայկական պետության ճյուղային կառավարման մարմիններ

47. Գահաժառանգման կարգը ըստ Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքի

48. Սմբատ Գունդստաբլը թագավորական (պետական) իշխանության ծագման մասին

49. Ամուսնության բացասական պայմանները ըստ Սմբ. Գունդստաբլի դատաստանագրքի

50. Ապահարզանի հիմքերը ըստ Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքի

51. Սեփականության տեսակները և աղբյուրները ըստ Սմբ. Գունդստաբլի դատաստանագրքի

52. Գրավադրման կարգը և նրա սահմանափակումները ըստ Սմբ. Գունդստաբլի դատաստանագրքի

53. Քրեական իրավունքի հիմնական սկզբունքները ըստ Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքի

54. Հանցագործություն և հանցակազմ հասկացությունների արտացոլումը Սմբ. Գունդստաբլի դատաստանագրքում

55. Սսի 1243 թ. ժողովի կանոնական որոշումները

56. Լևոն 2-րդի արտոնագրերը օտարերկրյա վաճառականների վերաբերյալ

57. ՙՋինվորական օրենքները՚ որպես Կիլիկյան Հայաստանի իրավունքի ընկալված աղբյուր

58. ՙԱնտիոքի Ասսիզները՚ որպես Կիլիկյան Հայաստանի իրավունքի ընկալված աղբյուր

59. Հայ-մոնղոլական 1254թ դաշնագիրը

60. Հայ-եգիպտական 1285թ. դաշնագիրը

61. Ներսես Շնորհալու ՙԹուղթ ընդհանրականը՚ իբրև իրավահայտ աղբյուր: Նրա իրավական ուղղվածությունը

62. Նոր տետրակ որ կոչի հորդորակը որպես Հայաստանի ազատագրկման ծրագիր

63. Մ. Բաղրամյանի նախընտրելի կառավարման ձևը

64. ՙՈրոգայթ Փառայց՚-ը որպես ապագա հայկական պետության սահմանադրական նախագիծ

65. ՙՈրոգայթ Փառաց՚-ը որպես Հայաստանի ազատագրման ծրագիր

66. Հայոց նախարարի և նրա խորհրդականների պաշտոնավարման ժամանակարգը ըստ ՙՈրոգայթ Փառայց՚-ի

67. Հայ ռուսական դաշնագրի արղությանական տարբերակը

68. Հայ-ռուսական դաշնագրի շահամիրյանական տարբերակը

69. ՙԹանզիմաթ՚-ը որպես Օսմանյան Թուրքիայի բարենորոգչական ձեռնարկում

70. Երևանի ժամանակավոր վարչության ստեղծումը և գործունեությունը

71. Հայկական մարզի ստեղծումը: 1833թ. հունիսի 23-ի օրենքը:

72. Արևմտահայ 1863 թ. Կանոնադրությունը:

73. Անդրկովկասյան սեյմի լուծարումը և Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը

74. Անդրկովկասյան սեյմի լուծարումը և Հայաստանի անկախացումը

75. Բաթումիի պայմանագիրը

76. Սևրի պայմանագիրը

77. Հայաստանի առաջին հանրապետության կառավարման մարմինների համակարգը

78. Հայաստանի առաջին հանրապետության իշխանության բարձրագույն մարմնի (խորհրդի) աշխատակարգը

79. Առաջին հանրապետության խորհրդի (խորհրդարանի) նախագահության կազմը և լիազորությունները

80. Առաջին հանրապետության կառավարման ձևը

81. Երկրորդ հանրապետության իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների համակարգը մինչև ՀԽՍՀ խորհուրդների 1-ին համագումարը

82. ՀԽՍՀ խորհուրդների համագումարի բացառիկ լիազորությունները

83. Իշխանության բարձրագույն մարմինները ըստ ՀԽՍՀ 1922թ. սահմանադրության

84. Հայաստանի կառավարման բարձրագույն և կենտրոնական ճյուղային մարմինները ՀԽՍՀ 1922թ. Սահմանադրությամբ

85. Հայաստանի իշխանության բարձրագույն մարմինները ըստ ՀԽՍՀ 1922թ. Սահմանադրության

86. ՀԽՍՀ ԿԳԿ նախագահության կարգավիճակը Երկրորդ հանրապետության պետական մարմինների համակարգում

87. Հայաստանի իրավական վիճակը ԱԽՖՍՀ-ի կազմում

88. Հայաստանի իրավական վիճակը ԽՍՀՄ կազմում:

89. Հայաստանի իրավական վիճակը ըստ 1926թ. Սահմանադրության

90. ՀԽՍՀ իշխանության բարձրագույն մարմինները ըստ Հայաստանի 1937թ. Սահմանադրության

91. Հայաստանի երրորդ հանրապետության պետական կառավարման ձևը

92. Հայաստանի Հանրապետության որպես պետության բնույթը

93. ՀՀ 2005թ. նոյեմբերի 28-ի հանրաքվեն և հիմնական օրենքում կատարված բարեփոխումները

94. Ժողովրդաիշխանության իրականացման անմիջական եղանակները ըստ ՀՀ 1995 թ. Սահմանադրության

95. Ազգային Ժողովի ստեղծման կարգը և նրա գործառույթները

96. Իշխանությունների տարանջատման գործընթացը Հայաստանի երրորդ հանրապետությունում

97. Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն

98. Հանրաքվեն իբրև անմիջական ժողովրդավարության դրսևորում

99. Իշխանությունների հավասարակշռման մեխանիզմն ըստ ՀՀ գործող Սահմանադրության:

100. ՀՀ գործող Սահմանադրությունը որպես պետության իրավակայացման երաշխիք